ՅՈԼՅԱՆ
ՀՀ ԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

21.10.2024 N 02-499

«ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ ՏԻԿԻՆ Մ. ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ
(Ք. Երևան, Աբովյան փ/23
Էլ.փոստ arg.aj@mail.ru)

ՈՐՈՇՈՒՄ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ԱՆ ««Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի միջոցով կազմակերպված «ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/01» ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ գնման ընթացակարգ/ շրջանակներում թիվ 14-15, 22, 32, 42, 54-55 չափաբաժինների մասով առաջին տեղ է զբաղեցրել «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել էին որոշակի անհամապատասխանություններ. մասնավորապես՝ հայտում թիվ 2, 14-15, 22, 32, 42, 54-55 չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը սխալ է ներկայացված :

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 41-րդ հոդվածի պահանջով, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում կատարվել է անհամապատասխանությունների շտկում, սակայն կրկին առկա են

անհամապատասխանություններ և համաձայն կարգի 42-րդ հոդվածի պահանջներին, մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Հիմք ընդունելով ***«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,»*** ենթակետի պահանջները, ընդունվում է որոշում ***«ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ***-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ գնումների համակարգող
Դ. Մադոյան, հեռ.+374 93 02 34 01